

Հավելված  
Հայաստանի Հանրապետության սպորտի և  
երիտասարդության հարցերի նախարարի  
2017թվականի \_\_\_\_\_ -ի  
N° \_\_\_\_\_ -Ա/1 հրամանի

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**  
**«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՅ ՄԱՐԶԻԿ» ՄՐՑՈՒՅԹԻ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Տարվա լավագույն հայ մարզիկ» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները:

**II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

2. Մրցույթի նպատակներն են՝

1) սպորտի միջոցով խթանել Հայաստան-Արցախ-սփյուռք կապերի ամրապնդումը և զարգացումը,

2) հայ մարզիկների մարզական հաջողությունների գնահատման գործընթացում ներգրավել առավել մեծ թվով մասնագետների,

3) մեծարել սպորտում (օլիմպիական մարզաձևեր, ոչ օլիմպիական մարզաձևերից ուշու, սամբո և շախմատ) ընթացիկ տարում նվաճումներ կամ նշանակալի հաջողություններ գրանցած, ինչպես նաև իրենց մրցելույթներով Հայաստանի և հայ ժողովրդի ճանաչելիությանը, հայոց պետական խորհրդանիշների, ազգային արժեքների հանրահռչակմանը նպաստած հայ մարզիկներին,

4) նպաստել հայկական ծագում ունեցող մարզիկների ազգային ինքնության ճանաչմանը և հայրենիքի հետ նրանց կապերի հաստատմանն ու զարգացմանը,

5) խրախուսել սպորտի զարգացումը և մասսայականացումը:

**III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

3. Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցույթի կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում կարող են ընդգրկվել Նախարարության, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության,

Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաների, մարզադպրոցների, սփյուռքի հայկական կառույցների ներկայացուցիչներ, անվանի մարզիկներ ու մարզիչներ, մարզական լրագրողներ, սպորտի հովանավորներ ու բարեգործներ:

5. Նախարարությունը մրցույթի SMS քվեարկության անցկացման նպատակով պայմանագիր է կնքում Հայաստանի Հանրապետությունում գործող հեռահաղորդակցության օպերատորական կազմակերպության (կազմակերպությունների) հետ: SMS քվեարկության ամբողջ հասույթը Հանձնաժողովի որոշմամբ ուղղվում է մարզադպրոցների հիմնանորոգմանը և դրանց տեխնիկական հագեցվածության ապահովմանը:

#### IV. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

6. Մրցույթին կարող են մասնակցել պրոֆեսիոնալ կամ սիրողական սպորտի (օլիմպիական մարզաձևեր, ոչ օլիմպիական մարզաձևերից ուշու, սամբո և շախմատ) ազգությամբ հայ (հայկական ծագում ունեցող) այն մարզիկները, որոնք ընթացիկ տարում ունեցել են նշանակալի մարզական հաջողություններ և նվաճումներ (օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցաշարերում (առնվազն 8 երկրների թիմերի մասնակցությամբ) գրավել են մրցանակային տեղեր, խաղային մարզաձևերում ցուցաբերել են անհատական հաջողություններ) և իրենց մրցելույթներով Հայաստանն ու հայ ժողովրդին ավելի ճանաչելի են դարձնում, նպաստում հայոց պետական խորհրդանիշների, ազգային արժեքների հանրահռչակմանը:

7. Մրցույթի մասնակիցների թեկնածություններն առաջադրվում են Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաների (օլիմպիական մարզաձևեր, ոչ օլիմպիական մարզաձևերից ուշու, սամբո և շախմատ) կողմից: Ընդ որում, յուրաքանչյուր մարզաձևում պետք է առաջադրվի ոչ պակաս, քան երկու թեկնածու:

#### V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

8. Յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-10-ն ընկած ժամանակահատվածում մրցույթի վերաբերյալ հայտարարությունը և մասնակցության հայտի ձևը հրապարակվում են Նախարարության պաշտոնական կայքէջում ([www.msy.am](http://www.msy.am)), տարածվում են զանգվածային լրատվական միջոցներով, տեղեկացվում են Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաները (օլիմպիական մարզաձևեր, ոչ օլիմպիական մարզաձևերից ուշու, սամբո և շախմատ):

9. Մրցույթին մասնակցելու հայտերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ազգային ֆեդերացիաները (օլիմպիական մարզաձևեր, ոչ օլիմպիական մարզաձևերից ուշու, սամբո և շախմատ): Հայտերի ներկայացման վերջնաժամկետը ընթացիկ տարվա դեկտեմբերի 5-ն է: Հայտերը ներկայացվում են [msy@msy.am](mailto:msy@msy.am) էլեկտրոնային հասցեով: Հայտին կցվում են ընթացիկ տարում տվյալ մարզիկի ունեցած մարզական նվաճումները հաստատող փաստաթղթեր (դիպլոմներ, երաշխավորություններ, մրցումների արձանագրություն), նրա հանրաճանաչության, նրա

կողմից ի նպաստ Հայաստանի և հայ ժողովրդի ճանաչելիությանը, հայոց պետական խորհրդանիշների, ազգային արժեքների հանրահռչակմանն իրականացրած գործունեության վերաբերյալ հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկատվական նյութեր և այլն):

10. Հանձնաժողովը ստուգում է ներկայացված հայտերի համապատասխանությունը մրցույթի պահանջներին և այդ պահանջներին համապատասխանող հայտերով ներկայացված թեկնածուների անվանացանկը (ազգանունների այբբենական հերթականությամբ ու հերթական (անհատական) համարով) հրապարակում է Նախարարության համացանցային կայքէջում:

11. Անվանացանկի հրապարակման պահից 15 օրվա ընթացքում էլեկտրոնային քվեարկության (մասնակցի հերթական (անհատական) համարով SMS հաղորդագրություն ուղարկելով) միջոցով ընտրվում են տարվա լավագույն 10 հայ մարզիկները: Ընդ որում, յուրաքանչյուր հեռախոսահամարից ամեն օր կարող է ուղարկվել ոչ ավելի, քան 5 հաղորդագրություն: Քվեարկությունն ավարտվում է սահմանված ժամկետի վերջին օրվա ավարտին: Քվեարկության ժամկետի ավարտից հետո Հանձնաժողովն ամփոփում է մրցույթի արդյունքները և էլեկտրոնային քվեարկությամբ ամենաշատ SMS հաղորդագրություններ ստացած առաջին 10 մարզիկները ճանաչվում են հաղթող: Հանձնաժողովը հաղթող մասնակիցների անվանացանկը հրապարակում է Նախարարության համացանցային կայքէջում:

12. Հանձնաժողովի կողմից կայացված որոշումները պարտադիր են մրցույթին մասնակցող մարզիկների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների, ինչպես նաև քվեարկությանը մասնակցած անձանց համար:

## VI. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Մրցույթի հաղթողները պարգևատրվում են շնորհակալագրերով, հուշամեդալներով, հուշանվերներով, դրամական կամ այլ մրցանակներով: Հաղթողների պարգևատրման եղանակը յուրաքանչյուր տարի որոշվում է Հանձնաժողովի կողմից:

## VII. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Մրցույթի անցկացման ընթացակարգի վերաբերյալ վեճերը (բողոքները, տարաձայնությունները) լուծվում են Հանձնաժողովի նիստում, որին բողոքաբերի կամ նրա ներկայացուցչի ներկայությունը պարտադիր է: Վեճի (բողոքների, տարաձայնությունների) քննարկման արդյունքում Հանձնաժողովի կայացրած որոշումը վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: